«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված

1. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» **2021 թվականի մայիսի 5-ի** ՀՕ-194-Ն **օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:**

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «և տարեկան ծրագրերին» բառերը փոխարինել «ծրագրին» բառով:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ. ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «և տարեկան ծրագրերի նախագծերը և դրանք» բառերը փոխարինել «ծրագրի նախագիծը և» բառերով.

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «, իսկ աշխատանքների տարեկան համամասնություններն արտացոլվում են տարեկան ծրագրում» բառերը:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ մասում «և տարեկան ծրագրերի» բառերը փոխարինել «ծրագրի» բառերով:

Հոդված 8. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում «և տարեկան ծրագրերով» բառերը փոխարինել «ծրագրով» բառով:

Հոդված 9. Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ, 6-րդ կետում և 7-րդ մասում «և տարեկան ծրագրերով» բառերը փոխարինել «ծրագրով» բառով:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրվանից: